

ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՄԻԱԿՈՐԸ՝ ՈՐՊԵՍ
ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԵՔՈՂԱԿԱՆ ՏԻՊԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց աննիշխաբան ներգործությունն են ունենում կրթական համակարգի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Կրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժեքորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ:

Կրթական ժամանակակից համակարգը պայմանավորված է նաև սոցիալ-մանկավարժական, հոգեբանական և լեզվաքաղաքական հիմնախնդիրներով:

Լեզվի օգտագործման յուրաքանչյուր գործողություն տեղի է ունենում որոշակի իրավիճակի համատեքստում, հասարակական կյանքի ոլորտներից մեկում: Այն ոլորտների ընտրությունը, որոնցում գործելու համար պատրաստում են սովորողներին, խիստ կարևոր նշանակություն ունի դասավանդման (այդ թվում ստուգման ու գնահատման) նյութերի համար իրավիճակներ, նպատակներ, առաջադրանքների թեմաներ ստեղծելու գործում [2; 7]:

Լեզվի կիրառման հնարավոր բնագավառների քանակն անսահման է, քանի որ գործունեության ցանկացած սահմանելի բնագավառ կարող է հետաքրքրության ոլորտ լինել այս կամ այն սովորողի կամ որոշակի դասընթացի համար: Լեզուների ուսումնառության նպատակով օգտակար կարող է լինել առնվազն հետևյալ ոլորտների տարբերակումը.

- անձնական ոլորտ
- հանրային ոլորտ
- կրթական ոլորտ
- մասնագիտական ոլորտ:

Մասնագիտական կրթության ոլորտում օտար լեզուների ուսուցման գլխավոր խնդիրներից մեկը կոնկրետ այս կամ այն մասնագիտության բնագավառում լեզվական, հաղորդակցական իրազեկության ձևավորումն է [1; 55]: Ելնելով օտար լեզուներին գործնականում տիրապետելու և դրանք մասնագիտական գործունեությանն ի սպաս դնելու նպատակներից, որոնք դրված են ոչ լեզվական բուհերի առջև, պարզ է դառնում, որ օտար լեզուների ուսուցման արդյունավետության բարձրացումն անհնար է առանց նեղ մասնագիտական ու տերմինաբանական բառաշերտի իմացության: Ուսանողը պետք է ոչ միայն գործնականորեն տիրապետի բառապաշարին, այլ նաև տվյալ մասնագիտության

շրջանակներում հաղորդակցվելիս կառուցման ազատ գործածել այն գրավոր և բանավոր խոսքում:

Սասնազիտական տերմինաբանության ընկալումը ուսանողների հաղորդակցական իրազեկության զարգացման, մասնավորապես մասնագիտական անգլերենի տիրապետման կարևորագույն պայմանն է:

Յուրաքանչյուր բառ յուրացնելիս ուսանողը պետք է իմանա բառի իմաստային ծավալը, արտասանությունը, գրությունը, քերականական ձևերը, կապակցելիությունը:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը պահանջում է մեծ աշխատանք յուրաքանչյուր բառի հետ, որը սովորողները ոչ լեզվական մասնագիտացում ունեցող բուհերում կատարում են առաջին և երկրորդ կուրսերում: Այստեղից բխում է ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսուցանվող լեզվական նյութի ընտրության անհրաժեշտությունը:

Սովա մեթոդական աշխատությունների ուսումնասիրության շնորհիվ հնարավոր դարձավ առանձնացնել/դասակարգել բառապաշարը՝ ըստ հետևյալ խմբերի.

1. Իրական (ռեալ) բառապաշար – Սա այն նվազագույն բառապաշարն է, որը ներառում է ուսումնական գործընթացում սովորողների կողմից յուրացվող ինչպես վերարտադրողական (պրոդուկտիվ, ակտիվ), այնպես էլ ընկալողական (ռեցեպտիվ, պասիվ) բառապաշարները:

Ակտիվ բառապաշարն անհրաժեշտ է խոսքային գործունեության վերարտադրողական ձևերի, այն է խոսելու և գրելու կարողությունների զարգացման ժամանակ:

Պասիվ բառապաշարը ներառում է այն բառամիավորները, որոնց իմաստը կարելի է հասկանալ ունկնդրելիս և ընթերցելիս, այսինքն անհրաժեշտ են ռեցեպտիվ խոսքային գործունեության համար:

2. Ներգոր (պոտենցիալ) բառապաշար - Այս բառապաշարն ընդգրկում է այն բառերը, որոնք նախկինում չեն հանդիպել, չեն ուսուցանվել, սակայն կարող են հասկացվել ելնելով համատեքստից, կառուցվածքից և գրաֆիկական պատկերից.

• միջազգային բառեր-տերմիններ, որոնք տարբեր լեզուներում ունեն ուղղագրական կամ արտասանական ընդհանրություններ, օրինակ *minister, parliament, revolution, evacuation, mechanism, progress* և այլն

• բազմիմաստ բառերի տարբեր նշանակություններ, որոնց ընդհանրությունը բացահայտվում է բառի գլխավոր իմաստի հիման վրա, օրինակ *conductor, scholarship, party, mass, settlement* և այլն

• բարդ և ածանցավոր բառերի այն շերտը, որը չի մտնում սովորողների ակտիվ բառապաշարի մեջ, բայց, այնուամենայնիվ, բառիմաստի բացահայտումը կատարվում է ըստ ծանոթ բառակազմական մոդելների և բառարմատների,

ուստի կարելի է հասկանալ և հեշտությամբ ըմբռնել, օրինակ, *confidant, trafficking, reformation, populism, electorate, politician, globalization, industrialization*։

Բառապաշարի հարստացումը հիմնականում կատարվում է բառակազմության հաշվին։ Եվ ինչպես մատնանշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, «բառակազմության կենտրոնական հասկացությունը բառն է, ուսումնասիրության հիմնական առարկան բաղադրյալ բառը։ Ինչպես ամեն մի կաղապարի, այնպես էլ բաղադրյալ բառի կաղապարի մեջ տարբերվում են միջուկային և առմիջուկային բաղադրիչներ, ընդ որում՝ բաղադրության տեսակները որոշվում են առմիջուկային բաղադրիչների միջոցով» [3: 87]։

Իրական և ներգոր բառապաշարների միջև սերտ կապ գոյություն ունի։ Ակտիվ բառապաշարը, որն օգտագործվում է գրելու և խոսելու ընթացքում, պետք է ճանաչվի մաս ունկնդրելու և ընթեցնելու ժամանակ։ Նրա յուրացումը հիմք է ծառայում մաս ներգոր բառապաշարի հետագա կուտակման համար։

Ժամանակակից անգլերենի բառապաշարի հիմնական շերտերի դասակարգման առանձնահատկությունները վերլուծելիս հարկ ենք համարում մատնանշել մի կողմից՝ բուն լիմաստ բառերը, հանձինս տերմինների, բառակապակցությունների, ինչպես մաս դարձվածային միավորների, մյուս կողմից՝ նրանց արտահայտման և նշանակման գործառնության առանձնահատկությունները՝ ելնելով բառերի գործածության ոլորտից։

Կարևոր մեթոդական խնդիր է համարվում տարբեր կառուցվածք ունեցող բառ-պատկերների ձևավորումը տեքստն ընթերցելիս դրանք ճանաչելու և հասկանալու համար։ Ուստի, ելակետ է ընդունվում ազդանշանային գործառնություն ունեցող, բառապաշարային որևէ միավորի ճանաչման գործընթացում արտաքին ազդակ հանդիսացող բառակազմական կառուցվածքը՝ իրեն բնորոշ տարբերակիչ հատկանիշներով։

Առանձնահատուկ ուշադրություն է ներկայացնում «բառապաշարային միավոր» հասկացությունը, որը մեթոդական կամ դիդակտիկական առումով կարող է հանդես գալ որպես

- բառ
- բառակապակցություն
- տերմին
- տերմինակապակցություն
- կայուն կապակցություն/դարձվածային միավոր։

Որպես բառապաշարային միավոր՝ մասնագիտական նվազագույնի կազմում ամենից առաջ ընդգրկվում են տերմիններն ու տերմինակապակցությունները, որոնք յուրաքանչյուր գիտության բնագավառում արտահայտում են կարևորագույն հասկացություններ։

Մեթոդական հետազոտություններում գոյություն ունեն բառապաշարի միավորի ընտրության հարցին վերաբերող տարբեր տեսակետներ և մոտեցումներ։ Հեղինակների մի մասը որպես բառապաշարի ընտրության միավոր

ընդունում է բառածևը: Դա նշանակում է, որ բառի տարբեր քերականական ձևերը դիտարկվում են որպես առանձին բառապաշարային միավորներ, որը, սակայն, իրական լինել չի կարող. քանի որ թույլ չի տալիս բացահայտել բառի հաճախականությունը [F. Kading, L. Fauoett, 1932 և ուրիշներ]:

Բառապաշարային միավորի սահմանման հարցում մեծ ներդրում ունի Ի.Վ. Ռախմանովը: Հիշատակման են արժանի նաև Ե. Թորնդայքի, Լ.Վ. Շչերբայի, Ա. Միրոյուրովի և այլոց աշխատությունները [7],[9]:

Առաջին բառարանները, որոնք կազմվել են հաճախականության սկզբունքով, հիմնվել են հատուկ գրականությունից ընտրված բառերի վիճակագրական տվյալների վրա: Այդ բառարանների հեղինակները ընտրել են տվյալ ենթալեզվին վերաբերող նյութեր տարբեր աղբյուրներից, որոնք հետո ենթարկվել են վիճակագրական վերլուծության: Կիրառվել է քարտերի համակարգ, յուրաքանչյուր բառը քարտագրվել է, ապա կատարվել է հաշվարկ: Այս պարագայում անտեսվել է բառիմաստը տարբեր համատեքստերում: Քարտագրված բառերի ընդհանուր քանակից էլ ընտրվել են բառերը կամ տերմինները, ապա դասակարգվել այբբենական կարգով կամ հաճախականության սկզբունքով:

Այս հաշվարկներից պարզ է դարձել, որ առավել հաճախակի հանդիպում են սպասարկու բառերը՝ հողեր, օժանդակ բայեր, նախդիրներ, կապեր և այլն: Սակայն սկսած երկրորդ հազարից, բառերի կրկնվելու գործակիցն այնքան է նվազում, որ այլևս անհնար է դառնում այս կամ այն բառի հաճախականության համար համոզիչ ապացույց գտնելը: Միա թե ինչու ժամանակակից մեթոդիստները հրաժարվում են միայն վիճակագրության հիման վրա բառերի ընտրության գաղափարից, քանի որ զուտ վիճակագրական տվյալները չեն կարող օբյեկտիվ չափանիշ լինել:

Հետագայում նոր բառարաններ ստեղծելիս հեղինակները, հիմնվելով իրենց մանկավարժական փորձի վրա, անհատական շտկումներ կատարեցին: Օրինակ, ամերիկացի մեթոդիստ Հենդլշինն առաջարկում է բառապաշարի ընտրության հիմքում դնել ազգակից լեզուների բառերի հաճախականությունը: Սվիթթ և Մարչանդն առաջարկում են ստեղծել ռճական երանգներից զուրկ բառերի ցուցակ:

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում անգլիացի մեթոդիստ Հ. Պալմերի կողմից ստեղծված նվազագույն բառարանները: Բառերի ընտրության համար Պալմերը հաճախականությունը չի ընդունում որպես միակ չափանիշ, նա գրանցում է նաև, թե ինչ աղբյուրներում և քանի անգամ է հանդիպում տվյալ բառը: Բացի այդ, Պալմերը փորձում է ընտրության հիմքում դնել բառի ոչ միայն գրաֆիկական պատկերը, այլ նաև բառիմաստը, որը կարող է արտահայտվել ինչպես բառակազմական տարրերով, այնպես էլ բառերով կամ բառակապակցություններով:

Այս բնագավառում մեծ է Լ. Վ. Շչերբայի աշխատությունների ներդրումը: Ի տարբերություն նախորդ նվազագույն բառարանների՝ առաջին անգամ փորձ կատարվեց ընտրության հիմքում դնել բառ-հասկացությունը: Նա առաջինը տահմանեց բառապաշարի ակտիվ և պասիվ շերտերը, այսինքն՝ այն բառապաշարը, որն անհրաժեշտ է վերարտադրելու և ընկալելու համար [9]:

Շչերբայի գաղափարները հետագայում զարգացրել է Ի. Վ. Ռախմանովը: Վերջինս մեթոդական տեսանկյունից առավել հստակություն է մտցնում բառապաշարի ակտիվ և պասիվ շերտերի միջև՝ առաջարկելով նոր տերմինների՝ ռեպրոդուկտիվ և ռեցեպտիվ:

Ռեպրոդուկտիվ¹ բառապաշար ասելով, ըստ ակադեմիկոս Ի. Վ. Ռախմանովի, հասկանում ենք այն բառապաշարը, որն անհրաժեշտ է մտքերն արտահայտելու համար: Ռեցեպտիվ բառապաշարն այն բառաշերտն է, որը ներառում է բազմաթիվ բառեր, որոնց իմաստը կարելի է ըմբռնել և հասկանալ ընթերցելիս կամ ունկնդրելիս [7; 9]: Այս մոտեցումը կիրառվում է ժամանակակից մեթոդական գրականության մեջ, որտեղ առանձնացվում են բառապաշարի ինչպես պրոդուկտիվ, այնպես էլ ռեցեպտիվ տեսակները:

Այսպիսով, ըստ Ի. Վ. Ռախմանովի, ակտիվ բառապաշարի յուրացումը ենթադրում է հետևյալը՝

- ճիշտ գործածել բառը օտար լեզվով մտքերը բանավոր արտահայտելիս

- ճիշտ գրել բառը՝ ըստ ուղղագրության և քերականական ձևերի:

Ինչպես հայտնի է, բառը և հասկացությունը նույնը չեն, քանի որ միևնույն բառը կարող է արտահայտել տարբեր հասկացություններ:

Սակայն, միևնույն հասկացությունն էլ կարող է արտահայտվել տարբեր բառերով, օրինակ՝

<i>decision</i>	determination	<i>defence</i>	protection
	settlement		barricade
	resolution		fortress
	judgement		resistance

Նման մոտեցումը նպաստում է ինչպես մայրենի, այնպես էլ օտար բառերի և հասկացությունների ընկալմանն ու արդյունավետ հարաբերակցմանը խոսքի մեջ:

Այսպիսով, որպես տերմինաբանական ընտրության նվազագույն միավոր առավել կարևորվում է բառ-հասկացությունը, որը մասնագիտական տեր-

¹ «Ռեպրոդուկտիվ» տերմինի փոխարեն, ինչպես ընդհանրապես մեթոդիկայում, այնպես էլ սույն հոդվածում օգտագործվում է «պրոդուկտիվ», այսինքն՝ «վերարտադրողական, արդյունարար, ակտիվ» տերմինը:

միևնաժամանակ ընտրության ժամանակ դիտվում է որպես բառապաշարային միավոր: Նրա հատկանիշները խմբավորվում են ըստ երեք հիմնական բաղադրիչների

- ձև
- իմաստ
- գործածություն:

Բառապաշարը յուրացնելու ժամանակ անհրաժեշտ է ապահովել յուրաքանչյուր լեզվական միավորի հատկանիշների լիարժեք մտապահում և լիարժեք յուրացում, ինչպես նաև բառապաշարային հմտությունների նպատակասլաց ձևավորում, քանի որ խոսքի մեջ դրանց օգտագործման համար անհրաժեշտ է իմանալ տվյալ բառի արտասանությունը, քերականական և կառուցվածքային ձևերը, հիմնական և երկրորդական իմաստները, տվյալ իմաստների համարժեքները մայրենիում և ուսուցանվող լեզվում, կապակցելիությունը, ինչպես նաև բառի գրաված տեղը հոմանիշների և հականիշների համակարգում:

Հետևաբար, նպատակահարմար ենք համարում տարբերակել մի կողմից բառապաշարային գիտելիքները, մյուս կողմից բառապաշարային հմտությունները:

Ի մի բերելով այդ դասակարգումը՝ նշենք, որ բառապաշարային գիտելիքները ներառում են

- հնչյունաբանական գիտելիքներ (հաճախ հարկ է լինում դիմել այս տերմինին, որովհետև միշտ չէ, որ յուրաքանչյուր բառ-միավորը հնչյունական շղթայում որոշակի սահմաններով անջատվում է հաջորդ կամ նախորդ բառերից, և հաճախ մի քանի բառեր միավորվում են մեկ հիմնական բառային շեշտի տակ):

- գրաֆիկական (գրության) և ուղղագրական գիտելիքներ (վերաբերում են գրային նշանների, տառերի տարբեր համակարգերին, դրանց համապատասխան հնչյունների փոխհարաբերությանը, ինչպես նաև տվյալ բառի հանրության կողմից ընդունված գրության կանոնների ամբողջությանը՝ համակարգին):

- իմաստաբանական գիտելիքներ (վերաբերում են բառիմաստներին և նրանց զարգացման օրինաչափություններին, ինչպես նաև բառերի դասակարգմանը՝ ըստ նշանակության):

- գիտելիքներ, որոնք կապված են տվյալ բառի մայրենի և ուսուցանվող լեզուներում առկա զուգորդման տարբեր կանոնների հետ, որի հետևանքով շատ հաճախ միևնույն բառը տարբեր լեզուներում աչքի է ընկնում լեզվագործածության տարբեր ծավալներով (այլ բառերի հետ ունեցած կապակցություններում):

Այնուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ միայն վերոհիշյալ գիտելիքները բավարար չեն բառապաշարի արդյունավետ յուրացման համար: Հավասարապես կարևորվում են նաև բառապաշարային հմտությունները:

Քանի որ բառապաշարն առանձնանում է իր պրոդուկտիվ (վերարտադրողական) և ռեցեպտիվ (ընկալողական) շերտերով, ուստի մենք տարբերակում ենք համապատասխանաբար

- պրոդուկտիվ հմտություններ
- ռեցեպտիվ հմտություններ:

Բառապաշարի պրոդուկտիվ յուրացումը ենթադրում է

- ճիշտ գործածել բառը միտքն օտար լեզվով արտահայտելիս,
- լսողությամբ օտար լեզվից թարգմանել բառը մայրենի լեզվի մեկ կամ երկու համարժեքներով, ինչպես նաև կատարել հակառակը (անկախ համատեքստից),

- ճիշտ գրել և արտաբերել բառը, ինչպես նաև կազմել նրա քերականական ձևերը:

Խնդիրը վերաբերում է տվյալ բառապաշարային միավորը երկարատև հիշողության մեջ պահելուն և համապատասխան ավտոմատիզմների ձևավորման հետ մեկտեղ վերջինս գրավոր և բանավոր խոսքում նախադասության մեջ) գործածելուն:

Իսկ քանի որ պասիվ կամ ռեցեպտիվ բառապաշարին վերաբերող բառերի յուրացումն անհրաժեշտ է տեքստն ընթերցելիս կամ ունկնդրելիս (ճիշտ հասկանալ ղեկավարվելով համատեքստով), ուստի անհրաժեշտ է.

- ծանաչել տվյալ բառապաշարային միավորը,
- իմատային կապերը վերհանել (տվյալ շարույթում),
- իմաստային կապերն ամբողջացնել(integration):

Այսպիսով, ինչպես ընդհանուր բառապաշարի, այնպես էլ մասնագիտական տերմինաբանության ընտրության ժամանակ առաջնությունը մախ և առանջ տրվում է «բառապաշարային միավորի» սահմանմանը, որի բաղադրիչներից յուրաքանչյուրը մեթոդական կամ դիդակտիկական առումով դիտվում է որպես մեկ ամբողջություն՝ հաշվի առնելով իմաստը, կառուցվածքը և գործածությունը:

Սա նշանակում է, որ բառապաշարային նոր նյութ ներմուծելիս սովորողն առնչվում է բառի վերոհիշյալ երեք կողմերին, որոնք անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Նրանց առանձնացումը կատարվում է միայն մեթոդական նպատակներով:

Օտար լեզվի ուսուցման մանրագնին քննության ընթացքում ակնհայտ է լեզվական նյութի մեթոդական տիպականացման անհրաժեշտությունը, որը դարձյալ կոչված է ավելի արդյունավետ դարձնել բառապաշարային նյութի յուրացումը:

Լեզվական նյութի մեթոդական տիպականացման հարցում զգալի ներդրում ունի Ի. Վ. Ռախմանովը: Նա անդրադառնում է հատկապես բառապաշարի դասակարգմանը (ռեցեպտիվ, ռեպրոդուկտիվ) «բառային միավոր» հասկացությանը՝ հարաբերակցելով այն խոսքային գործունեության տեսակների հետ և կարևորելով հատկապես բառի գործածությունը կամ ըմբռնումը [7; 9]:

Հետագայում բազմաթիվ հետազոտողներ հիմնվել են Ի. Վ. Ռախմանովի կողմից մշակված լեզվական նյութի մեթոդական տիպականացման համակարգի վրա՝ համալրելով այն նոր տարրերով:

Որոշակի մեթոդական խմբերի առկայությունը և այդ ուղղությամբ տարվող համապատասխան արդյունավետ աշխատանքները նպաստում են բառային նոր նյութի յուրացմանն ու իմաստազատմանը, ինչպես նաև ճշգրիտ բաղիմաստի բացահայտմանը: Այս կապակցությամբ մենք դարձյալ գալիս ենք այն եզրահանգման, որ մեթոդական տիպականացումը կոչված է «պատասխանելու» այն հարցին, թե ինչպես հասնել լեզվական նյութի լիակատար յուրացման արդյունավետության բարձրացմանը:

Մեթոդական տիպականացումը մշակելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

1. մայրենի և օտար լեզվում տվյալ բառապաշարային միավորի գրաֆիկական ձևի և իմաստի հարաբերությունը և դրանից բխող ներթափանցման (ինտերֆերենցիա) բնույթն ու աստիճանը,

2. տվյալ բառապաշարային միավորի բնույթն ուսուցանվող օտար լեզվում:

Խնդրի էությունն այն է, թե արդյոք տվյալ միավորը պարզ բառ է (ինքնուրույն կամ սպասարկու), թե բարդ, ածանցավոր, բառակապակցություն, դարձվածային միավոր կամ միջազգային բառ և նորաբանություն, քանի որ վերջիններս ունեն յուրացման դժվարության տարբեր աստիճաններ: Այսպես, հայտնի է, որ պարզ կամ կարճ բառերը համեմատաբար ավելի դժվար են մտապահվում, քան բարդ բառերը, քանի որ վերջիններս կարող են պարունակել արմատահիմքեր, որոնց իմաստը ըմբռնելի է, հետևաբար, դրանով իսկ դյուրին է դառնում ողջ բառի ընկալումը: Յուրացման դժվարություններն ավելի ակնառու են կայուն բառակապակցությունների և դարձվածքների իմաստավորման դեպքում:

Բառապաշարային միավորի սահմանումն ու ճշգրիտ դասակարգումը թույլ են տալիս ձևակերպել այն խնդիրները, որոնք ուղղված են բառապաշարի արդյունավետ ընկալմանն ու հավանական կոռուցման կարողությունների զարգացմանը: Հետևաբար, ինչպես նշում է մեթոդիստ Բ. Ա. Բուխբինդերը, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բառերի բնույթը, այլ նաև նրանց յուրացման դժվարությունները [4; 17-21], քանի որ այդ դժվարությունները բխում են ինչպես բառապաշարային միավորների լեզվաբանական առանձնահատկություններից, այնպես էլ սովորողի անհատական լեզվական կարողություններից:

Այսպիսով, տերմինաբանության ընտրության և մեթոդական տիպականացման հիմքում դրվում է բառապաշարային միավորը, որը մեթոդական առումով ներառում է բառեր /տերմիններ, բառակապակցություններ /տերմինակապակցություններ, դարձվածքներ: Դրանց յուրացման դժվարությամբ էլ պայմանավորված է մեթոդական խմբերի ստեղծումը՝ ուղղված ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում: Ժամանակակից լեզուներ սովորելու և սովորեցնելու բազմաթիվ ուղիներ կան: Տարիներ շարունակ Եվրախորհուրդը կողմնակից է այն մոտեցմանը, որը հիմնվում է սովորողի հաղորդակցական փոխներգործության հաշվառման վրա: Հետևաբար, լեզուն սովորելու, դասավանդելու և հետազոտելու ցանկացած մեթոդ ընդունելի է, եթե այն ապահովում է արդյունավետությունը: Վերջինս կախված է սովորողի շարժառիթներից և անձնային որակներից, ինչպես նաև առկա մարդկային և նյութական ռեսուրսներից: Այս հիմնարար սկզբունքին հետևելը անպայմանորեն մղում է ինչպես ուսուցման նպատակների, այնպես էլ մեթոդների և նյութերի համապարփակ բազմազանության:

Գրականություն

1. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, /հայերեն թարգմանություն/, Նորր Գրատուն, Երևան, 2005
2. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. «Անտարես», Երևան, 2004
3. Ջահուկյան Գ. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Գիտություն, Երևան, 1989
4. Бухбиндер В. А., Штраус В. Основы методики преподавания иностранных языков. Вища школа, Киев, 1986
5. Заботкина В. Н. Новая лексика современного английского языка. Высшая школа, М., 1989
6. Методика обучения немецкому языку в средней школе. Под ред. В. А. Бухбиндера. Вища школа, Киев, 1984
7. Рахманов И. В. Предисловие к Словарю наиболее употребительных слов английского, немецкого и французского языков, Гос. изд-во иностранных и национальных словарей, М., 1960
8. Смирницкий А. И. Лексикология английского языка. М., 1980
9. Шерба Л. В. Преподавание иностранных языков в средней школе. Высшая школа, М., 1974